լրամշակված նախագիծ

երկրորդ նախագիծ

Կ-830-23.04.2024-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի մայիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 8.1-ին հոդվածի 1-ին մասում «տեղեկատվության» բառից հետո լրացնել «և ընտրողների ցուցակների» բառերը:

Հոդված 2. Օրենսգրքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի երրորդ նախադասությունը հանել:

Հոդված 3. Օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեյալ խմբագրությամբ.

«2. Ընտրողների նախնական ցուցակը՝ ըստ ընտրական տեղամասերի, քվեարկության օրվանից 40 օր առաջ, արտահերթ ընտրությունների դեպքում՝ 20 օր առաջ, իսկ ընտրողների վերջնական ցուցակը՝ ըստ ընտրական տեղամասերի, քվեարկության օրվանից (ներառյալ արտահերթ ընտրությունների դեպքում) 7 օր առաջ տեղադրվում է համացանցում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի եւ Ներքին գործերի նախարարության համացանցային կայքերում՝ ներբեռնելու հնարավորությամբ: Ընտրողների նախնական և վերջնական ցուցակները՝ որոնման հնարավորությամբ, պետք է պարունակեն տեղեկատվություն ընտրողի անվան, ազգանվան, հայրանվան (հայրանունը՝ համապատասխան անձը հաստատող փաստաթղթերում առկայության դեպքում), ծննդյան օրվա, ամսի, տարեթվի, հաշվառման հասցեի, քվեարկության օրվա եւ ժամանակի, ընտրողի ընտրական տեղամասի համարի և տեղամասային կենտրոնի հասցեի մասին:»:

Հոդված 4. Ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 18-րդ հոդվածի 4-րդ մասը:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի մայիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 8.1-ին հոդվածի 1-ին մասում «տեղեկատվության» բառից հետո լրացնել «և ընտրողների ցուցակների» բառերը:

Հոդված 2. ~~Ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ նախադասությունը~~ **Օրենսգրքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի երրորդ նախադասությունը հանել**:

Հոդված 3. Օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեյալ խմբագրությամբ.

«**2.** Ընտրողների նախնական ցուցակը՝ ըստ ընտրական տեղամասերի, քվեարկության օրվանից 40 օր առաջ, արտահերթ ընտրությունների դեպքում՝ 20 օր առաջ, իսկ ընտրողների վերջնական ցուցակը՝ ըստ ընտրական տեղամասերի, քվեարկության օրվանից (ներառյալ արտահերթ ընտրությունների դեպքում) 7 օր առաջ տեղադրվում է համացանցում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի եւ Ներքին գործերի նախարարության համացանցային կայքերում՝ ներբեռնելու հնարավորությամբ: Ընտրողների **նախնական և** վերջնական ~~ցուցակը~~ **ցուցակները**՝ որոնման հնարավորությամբ, պետք է ~~պարունակի~~ **պարունակեն** տեղեկատվություն ընտրողի անվան, ազգանվան, հայրանվան (հայրանունը՝ համապատասխան անձը հաստատող փաստաթղթերում առկայության դեպքում), ծննդյան օրվա, ամսի, տարեթվի, հաշվառման հասցեի, քվեարկության օրվա եւ ժամանակի, ընտրողի ընտրական տեղամասի համարի և տեղամասային կենտրոնի հասցեի մասին:»:

Հոդված 4. Ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 18-րդ հոդվածի 4-րդ մասը:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ՝ (Կ-830-23.04.2024-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում «Հոդված 1» բառից և թվից հետո լրացնել «.» կետադրական նշանը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
2.		Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածում «Ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ նախադասությունը:» նախադասությունն առաջարկում ենք փոխարինել «Օրենսգրքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի երրորդ նախադասությունը հանել:» նախադասությամբ՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական	**Ընդունվել է**	**Ընդունվել է:**

			ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխությունները կատարվում են նրա առանձին՝ 1) բառեր, թվեր կամ կետադրական նշաններ այլ բառերով, թվերով կամ կետադրական նշաններով փոխարինելու միջոցով. 2) բառեր, թվեր կամ նախադասություններ հանելու միջոցով. 3) բաժիններ, գլուխներ, հոդվածներ, մասեր, կետեր, ենթակետեր, պարբերություններ կամ նախադասություններ նոր խմբագրությամբ շարադրելու միջոցով. 4) բաժինների, գլուխների, հոդվածների, մասերի, կետերի, ենթակետերի կամ պարբերությունների գործողությունը դադարեցնելու միջոցով:		
3.		Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածով նախատեսվող Օրենսգրքի 13-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 2-րդ մասի «Ընտրողների նախնական ցուցակը» բառերից առաջ անհրաժեշտ է լրացնել «2. » թիվն և	**Ընդունվել է**	**Ընդունվել է:**

			կետադրական նշանը:		
4.		Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածով նախատեսվող ՀՀ ընտրական օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի նոր խմբագրությամբ սահմանվում է ընտրողների վերջնական ցուցակում առկա տեղեկությունների սպառիչ ցանկը, սակայն նոր խմբագրությունը չի անդրադառնում ընտրողների նախնական ցուցակում ընդգրկվող տեղեկությունների ցանկին, ուստի իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից անհրաժեշտ է Նախագծով հստակեցնել նաև ընտրողների նախնական ցուցակում ընդգրկվող տեղեկությունների ցանկը: Ըստ այդմ նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ նախադասությունում «վերջնական» բառից առաջ առաջարկում ենք լրացնել «նախնական և» բառերը, «ցուցակը» բառը փոխարինել «ցուցակները» բառով, իսկ «պարունակի» բառը՝ «պարունակեն» բառով՝ նախադասության շարադասության հստակեցման նպատակով:	**Ընդունվել է**	**Ընդունվել է:**